«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2024 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **4** տպագիր էջից:

Առաջադրանք 1 Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է մի հատված Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունից։ Ընթերցի՛ր այն և պատասխանի՛ր հարցերին։

Ապա Շապուհ թագավորը հրաման է տալիս իր սենյակի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրան ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնիկ երկրի նույն հողը։ Եվ հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ և մյուս մարդկանց հրամայեց հեռանալ և, նրա ձեռքից բռնած, ճեմելով շրջում էր։ Սենյակում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թագավոր Հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար, ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ և քեզ ինձ որդի դարձնել, իսկ դու իմ դեմ խստացար, ինքնակամ, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի ինձ հետ պատերազմեցիր»։

Արշակ թագավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալ, բայց իմ թշնամիները ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին։ Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առջև բերեց, ես հիմա քո առաջ և քո ձեռքում եմ, ինչպես ուզում ես վարվիր ինձ հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»։

Շապուհ թագավորը, նրա ձեռքից բռնած, շրջում է ճեմելով, անմեղ ձևանալով բերում է հայկական հող շաղ տված հատակի վրա։ Իսկ երբ Արշակը այն տեղն է հասնում, հայկական հողի վրա ոտք է դնում՝ սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով լեզուն փոխում է, սկսում է խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, չարագոՀրծ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը։ Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տերերի բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք»։

Շապուհը դարձյալ, նրա ձեռքից բռնած, տանում է պարսկական հողի վրա, այն ժամանակ Արշակը զղջում է ասածների համար, խոնարհվում է, նրա ոտքերն է ընկնում, սաստիկ ափսոսում, զղջում է ասածների համար։ Իսկ երբ ձեռքից բռնած տանում է հայկական հողի վրա, առաջինից ավելի խիստ է խոսում։ Նորից հեռացնում է այդ հողի վրայից, սկսում է խոսքերով ապաշխարել։

Հարց 1 Ինչպե՞ս է կոչվում 5-րդ դարը: (1 միավոր)

Հարց 2 Ո՞վ է Փավստոս Բուզանդին նախորդող պատմիչը և ինչի՞ մասին է նա գրել: (2 միավոր)

Հարց 3 Պատմական ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկը, և ինչպե՞ս են կոչվում գրքի գլուխները: (2 միավոր)

Հարց 4 Ո՞րն է հայրենի երկրի հողի ու ջրի խորհուրդը: Ինչո՞ւ է Արշակ թագավորը իրեն ավելի զորեղ զգում հայրենի հողի ու ջրի վրա: (2 միավոր)

Հարց 5 Մեկնաբանի՛ր Արշակի եւ Շապուհի հարաբերությունները պատմական տեսանկյունից: Ինչպիսի՞ն են եղել Հայաստան-Պարսկաստան հարաբերությունները տվյալ ժամանակաշրջանում: Շարադրի՛ր կարծիքդ հիմնավորումներով: (5 միավոր)

Հարց 6 Հատվածի համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում: Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը 5-6 նախադասությամբ: (5 միավոր)

Առաջադրանք 2 Սիրելի՛ դիմորդ, ընթերցի՛ր Միսաք Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը և պատասխանի՛ր հարցերին։

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,
Ի՞նչ հեշտին է մրթնշաղն այս սատափե։

Աքասիաներ, գինով լույսե ու տապե,
Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան.
Մինչ կը ձյունե ծաղիկն իրենց հոտևան՝
Զոր խոլաբար հովը գրկել կը շտապե։

Ու լույսն անոնց, անխոս հուրի՛ դյութական,
Հրմայազեղ ու վարսքերով արծաթե,
Շատըրվանին կ'իջնե գուռին մեջ կաթե։

Ջուրը ցայտքեն ծաղիկ ծաղիկ կը կաթե.
Վրճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
Նրվազն անոր կը հեծեծե հեշտական։

Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե…

Հարց 1 Նշի՛ր Միսաք Մեծարենցի ծննդավայրը։ (1 միավոր)

Հարց 2 Թվարկի՛ր Միսաք Մեծարենցի բանաստեղծական ժողովածուների վերնագրերը։ (2 միավոր)

Հարց 3 Բանաստեղծությունից դու՛րս գրիր երեք տարբեր պատկերավորման միջոցի օրինակ՝ դիմացը նշելով տեսակը։ (3 միավոր)

Հարց 4 Մեկնաբանի՛ր, թե ինչպես են կառուցվում փոխաբերական պատկերները։ Ներկայացրո՛ւ բանաստեղծական տների կապակցման եղանակը։ (4 միավոր)

Հարց 5 Բացատրի՛ր, թե ինչպես են բնության երևույթները անձնավորվում «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծության մեջ։ Ինչպիսի՞ պատկերներով են ներկայացվում աքասիաները։ Ի՞նչ գործառույթներ ունեն բնապատկերները։ (5 միավոր)